**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀՌ-ԳՀԱՇՁԲ-18/13**

ք. Երևան «30» հունիսի 2018թ.

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Մ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Սասունաասար ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ստեփանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ***երաժշտական ձայնագրման ստուդիայի ակուստիկ վերանորոգման*** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 60 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100% տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա

...պալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 5 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 33 960 000 (երեսուներեք միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որից 5 660 000(հինգ միլիոն վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ

խարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է __16__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<<Հայաստանի Հանրային ռադիոընկերություն >> ՓԲԸ
ք.Երևան Ալեք Մանուկյան 5, 0025
ՀՎՀՀ 01541435
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
h/h 2470103477780000
Գործադիր տնօրեն Մարկ Գրիգորյան

_______________________
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Սասունասար>> ՍՊԸ
Ք.Երևան, Ազատության նրբ. 4-րդ շ.75 բն.
ՀՎՀՀ 01516603
Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ 1510022963830100
Տնօրեն՝ Ա.Ստեփանյան

_______________________
/ստորագրություն/
Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված թիվ 1
«30» մարտ 2018թ. կնքված
*ՀՀՌ-ԳՀԱՇՁԲ-18/13* ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

## «Երաժշտական ձայնագրման ստուդիայի ակուստիկ վերանորոգման աշխատանքներ»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

*** - Ծավալաթերթում առկա նյութերը ընտրված են ակուստիկ հաշվարկի արդյունքում: Նյութերը կարող են փոխարինվել համանման կլանման և ձայնամեկուսացման գործակից ունեցող այլ նյութերով միայն նախագծող ակուստիկ ճարտարագետի թույլտվությամբ, լաբորատոր չափումների տվյալների առկայության դեպքում և նոր ակուստիկ հաշվարկից հետո:**

| N/N | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Արժեքը հազ.դրամ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Միավոր | Ընդամենը |
| 1 | 3 | 4 | 5 | 17 | 18 |
| | Դահլիճ | | | | |
| | *Հատակներ* | | | | |
| 1 | Վերանորոգել ԱԴ-5 ձայնակլանիչի փայտե կմաղքները և ավելացնել ձայնակլանիչի կոշտության ДВП 4մմ /14հատ/ | քառ.մ | 74.30 | 9.29 | 690.58 |
| 2 | ԱԴ-5 ձայնակլանիչի դետալների տակից պարագծով ամրացնել փայտե շրջանակով 30*50մմ կտրվածքով չորսու | գծ.մ | 137.20 | 1.21 | 165.67 |
| 3 | ԱԴ-5 ձայնակլանիչի դետալների հետևում տեղադրել ակուստիկ հանքաբամբակ <Rockwool> лайт баттс 5սմ (Կամ համարժեք)* | քառ.մ | 48.00 | 1.98 | 95.08 |
| 4 | Ակուստիկ կլանիչ ЭХОКОР 20 60x60սմ /սպունգ/,հետևը ավելացնել կոշտության ДВП (Կամ համարժեք)* | հատ | 60.00 | 17.05 | 1022.79 |
| 5 | Կոշտության ДВП-60 հատ | քառ.մ | 21.60 | 1.99 | 43.06 |
| 6 | Ակուստիկ անցքավոր գիպսակարտոն Knauf 8-15-20 (Կամ համարժեք)* | քառ.մ | 16.60 | 10.75 | 178.39 |
| 7 | Ակուստիկ անցքավոր գիպսակարտոն Knauf 8-18 (Կամ համարժեք)* | քառ.մ | 17.30 | 17.43 | 301.54 |
| 8 | Ակուստիկ անցքավոր գիպսակարտոն knauf 8-12-36 (Կամ համարժեք)* | քառ.մ | 11.60 | 13.80 | 160.03 |
| 9 | Ակուստիկ անցքավոր գիպսակարտոն knauf 12-25 (Կամ համարժեք)* | քառ.մ | 19.20 | 13.37 | 256.68 |
| 10 | Ակուստիկ անցքավոր գիպսակարտոն knauf 6-18 (Կամ համարժեք)* | քառ.մ | 8.30 | 12.36 | 102.56 |
| 11 | Տեղադրել ակուստիկ հանքաբամբակ лайт баттс 5սմ (Կամ համարժեք)* | քառ.մ | 101.00 | 1.98 | 200.07 |
| 12 | ԱԴ-3 ձայնակլանիչ դետալի կառուցում տեղադրում /փայտե կմաղք երեսապատված 6մմ հաստ նրբատախտակով/ | քառ.մ | 33.10 | 13.61 | 450.38 |
| 13 | ԱԴ-3 ձայնակլանիչ դետալի հետևում տեղադրել ակուստիկ հանքաբամբակ лайт баттс 5սմ (Կամ համարժեք)* | քառ.մ | 55.40 | 1.98 | 109.74 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 14 | ԱԴ-4 ձայնակլանիչ դետալի կառուցում տեղադրում /փայտե կմախք երեսապատված 6մմ հաստ նրբատախտակով/ | քառ.մ | 7.60 | 17.35 | 131.87 |
| 15 | ԱԴ-4 ձայնակլանիչ դետալի հետևում տեղադրել ակուստիկ հանքաբամբակ лайт баттс 5ս մ | քառ.մ | 30.6 | 1.98 | 60.61 |
| 16 | ԱԴ-1 ձայնակլանիչ դետալի կառուցում տեղադրում /փայտե կմախք երեսապատված 6մմ հաստ նրբատախտակով h-5.3մ/ | քառ.մ | 15.40 | 13.61 | 209.53 |
| 17 | ԱԴ-2 ձայնակլանիչ դետալի կառուցում տեղադրում /փայտե կմախք երեսապատված 6մմ հաստ նրբատախտակով h-5.3մ/ | քառ.մ | 55.40 | 13.61 | 753.76 |
| 18 | ԱԴ-6 անկյունային ակուստիկ դիֆուզորների Knauf 8-15-20 տեսակի լցոնված ակուստիկ հանքաբամբակով <Rockwool> лайт баттс (Կամ համարժեք)* | քառ.մ | 19.70 | 15.78 | 310.84 |
| 19 | ԱԴ-6անկյունային դիֆուզորների հետևում տեղադրել ակուստիկ հանքաբամբակ<Rockwool> лайт баттс 5ս մ (Կամ համարժեք)* | քառ.մ | 53.0 | 1.98 | 104.99 |
| 20 | ԱԴ-7 ձայնակլանիչ դետալի կառուցում տեղադրում /փայտե կմախք երեսապատված անցքավոր գիպսակարտոնով 12-25 20սմ լցոնված ակուստիկ հանքաբամբակով/ | քառ.մ | 7.80 | 33.36 | 260.21 |
| 21 | ԱԴ-7 անկյունային դիֆուզորների հետևում տեղադրել ակուստիկ հանքաբամբակ лайт баттс 5ս մ (Կամ համարժեք)* | քառ.մ | 31.1 | 1.98 | 61.61 |
| 22 | Օպերատորների պատուհանի շրջանակի տեղադրում 12-25սմ կտրվածքով ՄԴՖ լցոնված ակուստիկ հանքաբամբակով | գծ.մ | 36.00 | 22.78 | 820.18 |
| 23 | Մալուխների անցկացման համար նախատեսված սակառների կառուցում՝ փայտե կմախքով- 20 գ/մ | քառ.մ | 12.00 | 12.27 | 147.20 |
| | **Առաստաղ** | | | | |
| 24 | Առաստաղների ներկում ակուստիկ ներկով K13 16մ մ (Կամ համարժեք)* | քառ.մ | 21.50 | 96.98 | 2085.10 |
| 25 | K13 ակ ո ւ ս տի կ ն ե ր կ ի MDF-ի շ ր ջ ան ակ 2170x820մ մ չ ափս ե ր ի 95գծ.մ | գ ծ .մ | 95.00 | 3.59 | 340.77 |
| 26 | Ակուստիկ առաստաղի իրականացում միաշերտ անցքավոր գիպսակարտոնով knauf 6-18 մետաղական պրոֆիլներով,ինքնակպչուն ժապավենով 0.55-0.6մմ հաստության (Կամ համարժեք)* | քառ.մ | 56.30 | 28.50 | 1604.81 |
| 27 | Առաստաղի վրա տեղադրել ակուստիկ հանքաբամբակ<Rockwool> лайт баттс 5ս մ (Կամ համարժեք)* | քառ.մ | 203.00 | 2.06 | 417.94 |
| 28 | Ներքին հարդարման աշխատանքների համար տախտակամած տեղադրում և հավաքում | քառ.մ | 180.60 | 1.54 | 278.95 |
| | **Օպերատորի մեծ և փոքր սենյակներ** | | | | |
| | **Հատակներ** | | | | |
| 29 | Ձայնամեկուսացնող սալի իրականացում 3*25մ մ /rockwool флур Баттс (Կամ համարժեք)* | քառ.մ | 50.00 | 11.82 | 590.84 |
| 30 | Հիդրոմեկուսացնող թաղանթ | քառ.մ | 50.00 | 7.52 | 376.21 |
| | **Պատեր** | | | | |
| 31 | Պատերի կարկասի հետևի հենք Gyprock стронг գիպսակարտոնով 15մմ հաստ (Կամ համարժեք)* | քառ.մ | 22.00 | 13.80 | 303.56 |
| 32 | Պատերի ձայնամեկուսացում 2*5սմ հանքաբամբակ/<rockwool> acustic batts (Կամ համարժեք)* | քառ.մ | 147.6 | 3.61 | 532.67 |
| 33 | Ինքնակպչուն ձայնակլանիչ թաղանթ Tecsound SY70 3,5մմ հաստ (Կամ համարժեք)* | քառ.մ | 147.60 | 22.11 | 3263.72 |
| 34 | Ե ր կ շ ե ր տ գ ի պս ո կ ար տո ն` վ ե ր ն ի շ ե ր տ Soundline dB, Ն ե ր ք ն ի շ ե ր տ giprock AKU_line (Կամ համարժեք)* | քառ.մ | 147.60 | 33.91 | 5004.54 |
| 35 | Vibrofix SP ամ ր ակ (Կամ համարժեք)* | հատ | 126.00 | 4.27 | 538.25 |
| 36 | Փայտե կամ վիբրոպրոֆիլներով կմախք /առաջին շերտ 50*70մմ կտրվածքով 60 սմ քայլով/ | քառ.մ | 91.20 | 6.93 | 632.43 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 37 | Փայտե կամ վիբրոպրոֆիլներով կմաղք/երկրորդ շերտ 40x50մմ մինչև 90/100սմ բարձրության վրա, 60սմ քայլով | քառ.մ | 31.70 | 6.83 | 216.67 |
| 38 | Փայտե կամ վիբրոպրոֆիլներով կմաղք/երկրորդ շերտ 20x40մմ 90/100սմ բարձրությունից վերև | քառ.մ | 59.50 | 6.93 | 412.61 |
| 39 | Պատերի ձայնամեկուսացում ակուստիկ հանքաբամբակով 72մմ մինչև 90/100սմ <Rockwool> лайт баттс(Կամ համարժեք)* | քառ.մ | 14.9 | 3.08 | 45.85 |
| 40 | Պատերի ձայնամեկուսացում ակուստիկ հանքաբամբակ 200մմ , 90/100սմ բարձրությունից վեր <Rockwool> лайт баттс (Կամ համարժեք)* | քառ.մ | 59.5 | 6.83 | 406.49 |
| 41 | Պատերի ձայնամեկուսացում ակուստիկ հանքաբամբակ 200մմ մինչև 90/100սմ <rockwool> acustic batts (Կամ համարժեք)* | քառ.մ | 14.3 | 7.15 | 102.31 |
| 42 | Պատերի ձայնամեկուսացում ակուստիկ հանքաբամբակ 150մմ մինչև 90/100սմ <rockwool> acustic batts (Կամ համարժեք)* | քառ.մ | 3.1 | 5.61 | 17.38 |
| 43 | Պատերի ձայնամեկուսացում ակուստիկ հանքաբամբակ 100մմ մինչև 90/100սմ <rockwool> acustic batts (Կամ համարժեք)* | քառ.մ | 4.5 | 4.06 | 18.27 |
| 44 | 6մմ հաստ նրբատախտակ կամ ՄԴՖ մինչև 90/100սմ | քառ.մ | 3.80 | 12.74 | 48.42 |
| 45 | Ակուստիկ անցքավոր գիպսոկարտոն knauf 8/15/20 հետևում նաև տեղադրված Rockwool 5սմ лайт Батс (Կամ համարժեք)* | քառ.մ | 12.60 | 15.26 | 192.34 |
| 46 | Ակուստիկ անցքավոր գիպսոկարտոն Knauf 6-18, հետևում նաև տեղադրված Rockwool 5սմ лайт Батс (Կամ համարժեք)* | քառ.մ | 22.70 | 13.83 | 313.95 |
| 47 | Ակուստիկ անցքավոր գիպսոկարտոն Knauf 8-12-50 հետևում նաև տեղադրված Rockwool 5սմ лайт Батс (Կամ համարժեք)* | քառ.մ | 5.60 | 15.26 | 85.48 |
| 48 | Ակուստիկ սպունգ 4սմ ES Bass (Կամ համարժեք)* | քառ.մ | 1.60 | 35.60 | 56.96 |
| 49 | Պատերի երեսապատում գործվածքով | քառ.մ | 91.20 | 1.60 | 145.88 |
| 50 | 6մմ հաստ նրբատախտակ կամ ՄԴՖ մինչև 90/100սմ | քառ.մ | 30.90 | 12.74 | 393.705 |
| 51 | Պատուհաների 2 շրջանակների միջև ընկած տարածքի և փայտե շրջանակների նախապատրաստում | հատ | 2.00 | 53.18 | 106.37 |
| | **Առաստաղ** | | | | |
| 52 | Առաստաղի մետաղական կմախք | քառ.մ | 48.60 | 22.21 | 1079.54 |
| 53 | Առաստաղի ձայնամեկուսացում 4x5սմ, հանքային բամբակ,/<rockwool> acustic batts (Կամ համարժեք)* | քառ.մ | 48.60 | 6.78 | 329.58 |
| 54 | Ինքնակպչուն ձայնակլանիչ թաղանթ 3.5մմ Tecsound SY70 (Կամ համարժեք)* | քառ.մ | 48.60 | 22.11 | 1074.73 |
| 55 | Երկշերտ գիպսակարտոն վերին շերտ Soundline dB, ներքին շերտ giprock AKU_line (Կամ համարժեք)* | քառ.մ | 48.60 | 35.65 | 1732.68 |
| 56 | Vibrofix SPU ամրակ (Կամ համարժեք)* | հատ | 120.00 | 4.27 | 512.66 |
| 57 | Առաստաղի փայտե կմախք 60*100մմ կտրվածքով | քառ.մ | 43.40 | 12.04 | 522.34 |
| 58 | Առաստաղից կախվող փայտե կլանիչ դետալ 1800x1100մմx200 լցված 4x5սմ acustic Bats երեսպատված մեշկավինակտորով -1.98քառ.մ (Կամ համարժեք)* | հատ | 1.00 | 45.90 | 45.90 |
| 59 | Հանքային բամբակ,/4x5սմ acustic Bats-1հատ (Կամ համարժեք)* | քառ.մ | 1.98 | 6.19 | 12.25 |
| 60 | Առաստաղից կախվող փայտե կլանիչ դետալ 200մմ հաստության լցված 4x5սմ acustic Bats երեսպատված մեշկավինակտորով-1.9 քառ.մ (Կամ համարժեք)* | հատ | 2.00 | 45.91 | 91.81 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 61 | Յանքային բամբակ - 4x5սմ acustic Bats-2հատ (Կամ համարժեք)* | քառ.մ | 3.80 | 6.19 | 23.52 |
| 62 | Ակուստիկ սպունգ ES Pyramid 40 (Կամ համարժեք)* | քառ.մ | 5.40 | 7.58 | 40.92 |
| 63 | Ակուստիկ սպունգ ES-jaws_mini մոդելի սպունգ (Կամ համարժեք)* | քառ.մ | 1.40 | 7.58 | 10.61 |
| 64 | Գիպսակարտոն 9,5մմ հաստ | քառ.մ | 3.20 | 9.74 | 31.15 |
| 65 | Ակուստիկ անցքավոր գիպսակարտոն Knauf 8-12-50 (Կամ համարժեք)* | քառ.մ | 13.10 | 14.81 | 193.95 |
| 66 | Ակուստիկ անցքավոր գիպսակարտոն Knauf 6-18 (Կամ համարժեք)* | քառ.մ | 16.40 | 14.81 | 242.81 |
| 67 | Անտիվիբրացիոն նյութ Вибронет A5 (Կամ համարժեք)* | հատ | 2.00 | 53.12 | 106.23 |
| 68 | Մետաղական վիբրոպրոֆիլներ կամ giprock պրոֆիլներ վիբրոակուստիկ քսուկով պատված (Կամ համարժեք)* | լրակազմ | 1.00 | 1708.85 | 1708.85 |
| 69 | Վիբրոակուստիկ սիլիկոն Вибронет (Կամ համարժեք)* | հատ | 30.00 | 4.27 | 128.16 |
| 70 | Թրծված ապակի 10մմ հաստության 1500x2000մմ /1 հատ/ և 1500x1000մմ /1 հատ/ չափերի | քառ.մ | 4.50 | 50.06 | 225.25 |
| 71 | Չթրծված ապակի 10մմ հաստության 1500x2000մմ /1 հատ/ և 1500x1000մմ /1 հատ/ չափերի | քառ.մ | 4.50 | 22.07 | 99.33 |
| 72 | Չթրծված ապակի 8մմ հաստության 1500x2000մմ /1 հատ/ և 1500x1000մմ /1 հատ/ չափերի | քառ.մ | 4.50 | 14.95 | 67.29 |
| | **Ձայնամեկուսիչ դռների պատրաստման նյութեր** | | | | |
| 73 | Օդափոխության օդատարի ձայնամեկուսացման սպունգ ES-Pyramid 80 (1.2x0.95) հաստությունը 100 մմ (Կամ համարժեք)* | հատ | 4.00 | 16.38 | 65.51 |
| 74 | Tecsound SY70 (Կամ համարժեք)* | քառ.մ | 44.60 | 23.49 | 1047.74 |
| 75 | <Rockwool> acustic bats 5սմ (Կամ համարժեք)* | քառ.մ | 16.70 | 15.66 | 261.60 |
| 76 | Դռան ձայնամեկուսիչ սիլիկոնե թաղանթ կլոր | գծ.մ | 72.00 | 10.05 | 723.84 |
| 77 | Մեկուսիչ շերտավոր թաղանթ փքառեգինե 10 մմ հաստության ինքնակպչուն | քառ.մ | 7.00 | 8.30 | 58.11 |
| | **Ընդամենը** | | | | 35606.20 |

| | |
|---|---|
| **Ընդամենը** | **35606.20** |
| **Ընդամենը ԱԱՀ 20%** | **7121.24** |
| **Ընդամենը** | **42727.44** |

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք.Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<<Հայաստանի Հանրային ռադիոընկերություն >> ՓԲԸ
ք.Երևան Ալեք Մանուկյան 5, 0025
ՀՎՀՀ 01541435
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
h/h 2470103477780000
Գործադիր տնօրեն Մարկ Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Սասունաասար>> ՍՊԸ
Ք.Երևան, Ազատության նրբ. 4-րդ շ.75 բն.
ՀՎՀՀ 01516603
Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ 1510022963830100
Տնօրեն՝ Ա.Ստեփանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված թիվ 2*
*«      »       20   թ.  կնքված*
***ՀՀՌ-ԳՀԱՇՁԲ-18/13** ծածկագրով պայմանագրի*

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## « *Երաժշտական ձայնագրման ստուդիայի ակուստիկ վերանորոգման աշխատանքներ*»
## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | ***Դահլիճում*** *– ԱԴ- 1,2,3,4,5 ձայնակլանիչ դետալների կառուցում և ամրացում, ԱԴ-3,4 դետալների և առաստաղի հանքաբամբակի տեղադրում, սակառների կառուցում* | Պայմանագիր կնքելու ամսաթիվ | 20օրացուցային օր հետո |
| 2 | ***Օպերատորների մեծ և փոքր սենյակներում*** *– ձայնամեկուսացնող սալի և հիդրոմեկուսացնեղ թաղանթի իրականաում, առաստաղի հանքաբամբակի տեղադրում, պատերի կարկասի, սալերի և թաղանթի իրականացում, առաստաղի կարկասի և շերտերի կառուցում* | Պայմանագիր կնքելու ամսաթիվ | |
| 3 | ***Դահլիճում*** *– դետալներ հանքաբամբակի տեղադրում* | Պայմանագիր կնքելու ամսաթիվ | 20օրացուցային օր հետո |
| 4 | ***Օպերատորների մեծ և փոքր սենյակներում*** *– կարկասների կառուցում, ձայնամեկուսացում, մասնակի երեսապատում, վիբրոպրոֆիլների մոնտաժում, անտիվիբրացիոն նյութերի և վիբրոսիլիկոնի կիրառում* | Պայմանագիր կնքելու ամսաթիվ | |
| 5 | ***Դահլիճում*** *– ձայնակլանիչ դետալներում ակուստիկ հանքաբամբակների տեղադրում, ակուստիկ ներկի և պատուհանների շրջանակների իրականացում, օդատարի ձայնամեկուսացոմ, անցքավոր գիպսակարտոնների իրականացում, ակուստիկ կլանիևի տեղադրում, ամցքավոր գիպսոկարտոնների կառուցում, առստաղի ներկում ակուստիկ ներկով,* | Պայմանագիր կնքելու ամսաթիվ | 20օրացուցային օր հետո |
| 6 | ***Օպերատորների մեծ և փոքր սենյակներում*** *– ամրակների տեղադրում, ակուստիկ գիպսակարտոնե երեսապատում, փայտե կամ վիբրոպրոֆլիներով կմախքների կառուցում, պատերի ձայնամեկուսացում, նրբատախտակների, և ակուստիկ սպունգերի տեղադրում, անցքավոր գիպսակարտոնով և կտորով երեսապատում, փայտե կլանիչների և պատուհանների ապակիների տեղադրում,* | Պայմանագիր կնքելու ամսաթիվ | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | Պայմանագիր կնքելու ամսաթիվ | 60 օրացուցային օր հետո |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<<Հայաստանի Հանրային ռադիոընկերություն >> ՓԲԸ
ք.Երևան Ալեք Մանուկյան 5, 0025
ՀՎՀՀ 01541435
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
h/h 2470103477780000
Գործադիր տնօրեն Մարկ Գրիգորյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Սասունասար>> ՍՊԸ
Ք.Երևան, Ազատության նրբ. 4-րդ շ.75 բն.
ՀՎՀՀ 01516603
Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ 1510022963830100
Տնօրեն՝ Ա.Ստեփանյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 30 » հունվ 2018թ. կնքված
**ՀՀՌ-ԳՀԱՇՁԲ-18/13** ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ հազ.դրամ

| Աշխատանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | |
| | | | ապրիլ | մայիս | հունիս | Ընդամենը |
| 1 | 45461100 | ***Երաժշտական ձայնագրման ստուդիայի ակուստիկ վերանորոգման աշխատանքներ*** | ***12763.49*** | ***13824.51*** | ***16139.44*** | ***42727.44*** |

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ, Նշված են աճողական:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<<Հայաստանի Հանրային ռադիոընկերություն >> ՓԲԸ
ք.Երևան Ալեք Մանուկյան 5, 0025
ՀՎՀՀ 01541435
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
h/h 2470103477780000
Գործադիր տնօրեն Մարկ Գրիգորյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Սասունասար>> ՍՊԸ
Ք.Երևան, Ազատության նրբ. 4-րդ շ.75 բն.
ՀՎՀՀ 01516603
Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ 1510022963830100
Տնօրեն՝ Ա.Ստեփանյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
« 30 » [illegible] 2018թ. կնքված
**ՀՀՌ-ԳՀԱՇՁԲ-18/13** ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| <<Սասունմասար>> ՍՊԸ | <<Հայաստանի Հանրային ռադիոընկերություն >> ՓԲԸ |
| Ք.Երևան, Ազատության նրբ. 4-րդ շ.75 բն. | ք.Երևան Ալեք Մանուկյան 5, 0025 |
| ՀՎՀՀ 01516603 | ՀՎՀՀ 01541435 |
| Արարատբանկ ԲԲԸ | <<Արդշինբանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ 1510022963830100 | h/h 2470103477780000 |
| Տնօրեն՝ Ա.Ստեփանյան | Գործադիր տնօրեն Մարկ Գրիգորյան |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ____________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________________________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս________________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքն ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ____________________________-ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված 5*
*« 30 » Տարր 2018թ. կնքված*
***ՀՀՌ-ԳՀԱՇՁԲ-18/13** ծածկագրով պայմանագրի*

***Երաժշտական ձայնագրման ստուդիայի ակուստիկ վերանորոգման աշխատանքներ***
Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն)
և օգտագործված նյութերի երաշխիքային

| | |
|---|---|
| Շինարարական օբյեկտի երաշխիքային ժամկետը | օգտագործվող նյութերը պետք է ունենան առնվազն 10 տարվա երաշխիքային ժամկետ: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<<Հայաստանի Հանրային ռադիոընկերություն >> ՓԲԸ
ք.Երևան Ալեք Մանուկյան 5, 0025
ՀՎՀՀ 01541435
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
h/h 2470103477780000
Գործադիր տնօրեն Մարկ Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Սասունաասար>> ՍՊԸ
Ք.Երևան, Ազատության նրբ. 4-րդ 2.75 բն.
ՀՎՀՀ 01516603
Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ 1510022963830100
Տնօրեն՝ Ա.Ստեփանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 10

**ՀՀՌ-ԳՀԱՇՁԲ-18/13** * ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

**ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի կատարման ապահովում)**

ք. Երևան

«_29_»_03._ 2018 թ.

**,,ՍԱՍՈՒՆԱՍԱՐ'' ՍՊԸ_, ի դեմս Ընկերության** տնօրեն՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ՝ անձնագիր BA2688171,տրված 007-ի կողմից,05.05.2016թ., որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է _Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ_ *(այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ _______ **ՀՀՌ-ԳՀԱՇՁԲ-18/13** * ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ :

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

,,ՍԱՍՈՒՆԱՍԱՐ'' ՍՊԸ
Ք. Երևան; Ազատության նորբանցք, 4 -րդ շենք,թիվ 75 բնակարան
Արարատբանկ ԲԲԸ
hh1510022963830100
ՀՎՀՀ01516603
Տնօրեն՝ Ա. Ստեփանյան
Կ.Տ

* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը փեղեկագրում հրապարակելը:
** լրացվում է մասնակցի կողմից

1.

## ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[16] N

*(պայմանագրի կատարման ապահովում)*

2.

Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝,,ՍԱՍՈՒՆԱՍԱՐ'' ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ Արարատբանկ ԲԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ hh1510022963830100

6. Վճարողի ՀՎՀՀ01516603

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ ՝ Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 01541435

10.Շահառուի բանկը՝ <<Արդշինբանկ>> ՓԲԸ

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 2470103477780000

12.Գումարը թվերով և բառերով՝3783448/Երեք միլիոն յոթ հարյուր ութանասուներեք հազար չորս հարյուր քառասունութ/

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ/AMD/

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ **պայմանագրի կատարման ապահովում**

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ՀՀՈ-ԳՀԱՇՁԲ-18/13

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝--- էջ

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները<br>/________________/<br>/________________/<br>19.բ.<br>Կ.Տ. | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>Տնօրեն՝ Ա. Ստեփանյան<br>/<br>18.բ.<br>Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /________________/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա. /________________/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

[16] Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»: